

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
2024Թ. ԷՆԵՐԳԵՏԻԿ  
ՀԱՇՎԵԿՇԻՌ»**

**«Հայաստանի Հանրապետության 2024թ. Էներգետիկ հաշվեկշիռ»**

Երևան – 2025թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
2. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ .....	9
3. ՀԱՇՎԵԿՇՈՒ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....	11
3.1. Էլեկտրական էներգիայի հաշվեկշիռը .....	11
3.2. Բնական գազի հաշվեկշիռը.....	13
3.3. Ջերմային էներգիայի հաշվեկշիռը.....	15
3.4. Նավթամթերքի հաշվեկշիռը.....	17
3.5. Ածխի հաշվեկշիռը.....	18
3.6. Փայտի և այլ բիովառելիքի հաշվեկշիռը .....	19
3.7. Վերականգնվող էներգակիրների հաշվեկշիռը .....	20
4. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ.....	22
4.1 Առաջնային էներգապաշարների արտադրություն.....	22
4.2 Ներմուծում .....	23
4.3 Ընդամենը առաջնային էներգիայի մատակարարում .....	24
4.4 Համախառն ներքին արդյունքի էներգատարություն.....	25
4.5 Առաջնային էներգիայի մատակարարում մեկ շնչի հաշվով .....	25
4.6 Վերականգնվող էներգիայի առաջնային արտադրության մասնաբաժինն առաջնային էներգիայի մատակարարման նկատմամբ.....	26
4.7 Էներգապաշարների սպառումը սեփական կարիքների համար.....	27
4.8 Էներգապաշարների կորուստները հաղորդման և բաշխման ընթացքում.....	28
4.9 Էներգապաշարների սպառումը ըստ ոլորտների.....	28
4.9.1 Էներգապաշարների սպառումը արդյունաբերության ոլորտում.....	29
4.9.2 Էներգապաշարների սպառումը տրանսպորտի ոլորտում .....	30
4.9.3 Էներգապաշարների սպառումը տնային տնտեսությունների ոլորտում .....	31
4.9.4 Էներգապաշարների սպառումը գյուղատնտեսության ոլորտում .....	32
4.9.5 Էներգապաշարների սպառումը ծառայությունների ոլորտում .....	32
5. ԱՄՓՈՓՈՒՄ .....	34
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	35

## Նկարների ցանկ

Նկ. 1.1 2024թ. էներգետիկ հաշվեկշռի ինֆոգրաֆիկա (կտ ն.հ.).....	8
Նկ. 4.1 Առաջնային էներգապաշարների արտադրություն (կտ ն.հ.).....	23
Նկ. 4.2 Առաջնային էներգապաշարների ներմուծում (կտ ն.հ.) .....	24
Նկ. 4.3 Ընդամենը առաջնային էներգիայի մատակարարում (%) .....	24
Նկ. 4.4 Համախառն ներքին արդյունքի էներգատարությունը (կտ ն.հ./մլրդ դրամ).....	25
Նկ. 4.5 Առաջնային էներգիայի մատակարարում մեկ շնչի հաշվով (տ ն.հ.).....	26
Նկ. 4.6 Վերականգնվող էներգիայի առաջնային արտադրության մասնաբաժինն առաջնային էներգիայի մատակարարման նկատմամբ (%) .....	27
Նկ. 4.7 էներգապաշարների սպառումը սեփական կարիքների համար (կտ .ն . հ).....	27
Նկ. 4.8 էներգապաշարների կորուստները հաղորդման և բաշխման ընթացքում (կտ .ն . հ) .....	28
Նկ. 4.9 էներգապաշարների սպառումն ըստ ոլորտների (կտ .ն . հ) .....	29
Նկ. 4.10 էներգապաշարների սպառումն (կտ .ն . հ) ու էներգատարությունը (կտ .ն . հ/մլրդ դրամ) արդյունաբերության և շինարարության ոլորտներում .....	29
Նկ. 4.11 էներգապաշարների սպառումն (կտ .ն . հ) ու էներգատարությունը (կտ .ն . հ/մլրդ դրամ) տրանսպորտի ոլորտում (կտ .ն . հ).....	30
Նկ. 4.13 էներգապաշարների սպառումն (կտ .ն . հ) ու էներգատարությունը (կտ .ն . հ/մլրդ դրամ) տնային տնտեսությունների ոլորտում .....	31
Նկ. 4.14 էներգապաշարների սպառումն (կտ .ն . հ) ու էներգատարությունը (կտ .ն . հ/մլրդ դրամ) գյուղատնտեսության ոլորտում .....	32
Նկ. 4.15 էներգապաշարների սպառումն (կտ .ն . հ) ու էներգատարությունը (կտ .ն . հ/մլրդ դրամ) ծառայությունների և այլ ոլորտներում .....	33

## Աղյուսակների ցանկ

Աղ. 3.1 2024թ արտադրված էլեկտրաէներգիան (մլն կՎտժ), մասնաբաժինն ընդհանուր արտադրանքում (%) և տոկոսային հարաբերակցությունը 2023թ. նկատմամբ (%).....	11
Աղ. 3.2 Բնական գազի սպառումը, մասնաբաժինը և փոփոխությունն ըստ ոլորտների.....	14
Աղ. 3.3 Նավթամթերքների սպառումը համապատասխան ոլորտներում (%) .....	17
Աղ. 3.4 Փայտի, փայտանյութի և այլ բիովառելիքի սպառումը համապատասխան ոլորտներում (%).....	19
Աղ. 3.5 2024թ. արտադրված էլեկտրաէներգիան (մլն կՎտժ), դրվածքային հզորությունը (ՄՎտ), մասնաբաժինն ընդհանուր արտադրանքում (%) և տոկոսային հարաբերակցությունը 2023թ. նկատմամբ (%).....	20

## ԿԻՐԱՌՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԳԼՃԿ	Ավտոգազալիցքավորման ճնշակայան
ԱԷԿ	Ատոմային էլեկտրակայան
ԱՏԳԱԱ	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ
ԲԷՑ	Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԳՍՊԿ	Գազի ստորգետնյա պահեստ-կայան
ԵՄ	Եվրոպական Միություն
ԷՀ	Էներգետիկ հաշվեկշիռ
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ՀԷՀ	Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռ
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀոԷԿ	Հողմային էլեկտրակայան
ՀՎԷԷՀ	Հայաստանի Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ)
ՄևԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄԷԳ	Միջազգային էներգետիկ գործակալություն (IEA)
ՋԷԿ	Ջերմային էլեկտրակայան
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՖՎ	Ֆոտովոլտային

## ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ

ԳՎտժ	գիգավատտ*ժամ ( $10^9$ Վտժ)
խմ	խորանարդ մետր
կմ	կիլոմետր
կՎտ	կիլովատտ ( $10^3$ Վտ)
կՎտժ	կիլովատտ*ժամ ( $10^3$ Վտժ)
կտ ն.հ.	կիլոտոննա նավթային համարժեք (1000 տ ն.հ.)
միլիոն	միլիոն
միլիոն խմ	միլիոն խորանարդ մետր
ՄՋ	մեգաջոուլ ( $10^6$ Ջ)
ՄՎտ	մեգավատ ( $10^6$ Վտ)
ՄՎտժ	մեգավատտ*ժամ ( $10^6$ Վտժ)
Ջ	Ջոուլ
ՋԳ	Ջերմոցային գազեր
Վտ	Վատտ
Վտժ	Վատտ*ժամ
տ	տոննա
տ ն.հ.	տոննա նավթային համարժեք
ՏՋ	տեռաջոուլ ( $10^{12}$ Ջ)

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ հաշվեկշռի կազմումը կարևորվում է էներգետիկ անվտանգության, էներգիայի մատակարարման բազմազանեցման, ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների միտումների գնահատման, ինչպես նաև Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի (UNFCCC) թիրախներին հասնելու առաջընթացի գնահատման նպատակով:

Էներգետիկ հաշվեկշիռը հանրապետությունում էներգախնայողության և վերականգնվող էներգիայի ցուցանիշների գնահատման, փաստագրման և մոնիտորինգի կարևոր միջոց է:

Էներգետիկ հաշվեկշիռը էներգետիկայի ոլորտում ՋԳ ելակետային տվյալների հավաքագրման կարևորագույն աղբյուրներից մեկն է: Այն հիմք է հանդիսանում շրջակա միջավայրի վրա արտանետումների բացասական ազդեցության մեղմման միջոցառումների մշակման, իրականացման և արդյունքների գնահատման համար: Մեղմման միջոցառումների իրականացումն առավելապես կարևորվում է ՀՀ կողմից վավերացրած Փարիզյան համաձայնագրի և ստանձնած պարտավորությունների ներքո:

Հայաստանի էներգետիկ հաշվեկշռի մշակման համար իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Կազմակերպվել է ՀՀ Վիճակագրական կոմիտեի (Արմստատի) կողմից վիճակագրական տվյալների ստացման գործընթաց:
- Կազմակերպվել են գործնական հանդիպումներ և քննարկումներ տեղեկատվության հավաքագրման բարելավման համար, մասնավորապես՝ ա) հեղուկ վառելիքի՝ ըստ ոլորտների, սպառման ծավալների գնահատման համար, բ) կենսավառելիքի (մասնավորապես, վառելափայտի և գոմաղբի) սպառման գնահատման համար, գ) արևային՝ ՖՎ և ջրատաքացման համակարգերի կողմից արտադրված և սպառված էներգիայի ծավալների գնահատման համար:
- Վերլուծվել է 2023թ. էներգետիկ հաշվեկշռի կազմման մեթոդաբանությունը:
- Վերլուծվել է հավաքագրված տեղեկատվությունը, հաշվարկվել են հաշվեկշռի ցուցանիշները, արխիվացվել է ելակետային տեղեկատվությունը:
- Կազմվել և ներկայացվել է Հայաստանի 2024թ. էներգետիկ հաշվեկշիռը՝ Եվրոստատի և Միջազգային էներգետիկ գործակալության (ՄԷԳ) ձևաչափերով:

Հայաստանի էներգետիկ հաշվեկշռի կազմումը և հրապարակումը սահմանված է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով:

Հայաստանի 2024թ. էներգետիկ հաշվեկշռի կազմման համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել ՄԷԳ, Եվրոստատի և Տնտեսական համագործակցության և զարգացման


կազմակերպության (OECD) կողմից հրատարակված ուղեցույցը<sup>1</sup>, ինչպես նաև Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի (EDRC) կողմից մշակված «Հայաստանի էներգետիկ հաշվեկշռի մշակման բացատրագիրը»: Նշված բացատրագրում նկարագրված են էներգետիկ հաշվեկշռի կազմման սկզբունքները, ելակետային տեղեկությունների հիմնական աղբյուրները և հաշվեկշռի ձևավորման համար կիրառված հիմնական մոտեցումները:

2017թ. հաշվեկշռի կազմման ընթացքում EDRC-ի կողմից մշակված Excel ծրագիրը «էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ենթարկվել է որոշակի լրամշակման: 2024թ. էներգետիկ հաշվեկշռում նույնպես կատարվել են որոշակի լրամշակումներ՝ մասնավորապես, Արմատատի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա ավելացվել են ներկրվող նավթամթերքի որոշ ցուցանիշներ՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման, ինչպես նաև էներգակիրների՝ ըստ տեսակների և արդյունաբերության ճյուղերի սպառման ծավալները, ՀՀ մաքսային ծառայությունից ստացվել են ներկրված արևային ջրատաքացուցիչների տվյալները:

---

<sup>1</sup> “Energy Statistics Manual”, OECD/IEA, 2007

(<https://iea.blob.core.windows.net/assets/67fb0049-ec99-470d-8412-1ed9201e576f/EnergyStatisticsManual.pdf>)



Նկ. 1.1 2024թ. էներգետիկ հաշվեկշռի ինֆորաֆիկա (կտ ն.հ.)

## 2. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Էներգետիկ հաշվեկշիռը ներկայացվում է ստանդարտ ձևաչափի աղյուսակի տեսքով, որտեղ արտացոլվում են հաշվետու ժամանակահատվածում արդյունահանված, արտադրված, ներմուծված, արտահանված, պահեստավորված, վերամշակված, փոխակերպված, փոխադրված, բաշխված և տարբեր ոլորտներում օգտագործված էներգետիկ պաշարների ծավալները: Երկրի էներգետիկ հաշվեկշիռը ներկայացվում է Եվրոստատի կամ ՄԷԳ-ի ստանդարտ ձևաչափերով, որոնք համապատասխանում են էներգետիկ վիճակագրությանը ներկայացվող Եվրոպական պառլամենտի և խորհրդի No 1099/2008<sup>2</sup> առ 22 հոկտեմբերի 2008թ. կանոնակարգի պահանջներին:

Էներգետիկ հաշվեկշռի կազմման ժամանակ հաշվի են առնվում էներգակիրների և էներգիայի հոսքերը՝ ըստ դրանց արտադրման, վերամշակման, փոխակերպման, հաղորդման, պահեստավորման և վերջնական սպառման փուլերի, ինչպես նաև սեփական կարիքների համար էներգիայի ծախսերը և հնարավոր կորուստները:

Համաձայն Եվրոստատի պահանջների՝ էներգետիկ հաշվեկշիռները կազմվում են բնական (ՏՋ) միավորներով, իսկ համաձայն ՄԷԳ-ի պահանջների՝ նավթային համարժեքով (ն.հ.), որը հավասար է՝ 1 կտ ն.հ. = 41.868 ՏՋ:

Վիճակագրական տվյալների հավաքագրումը, մշակումը և էներգետիկ հաշվեկշռի կազմումը սկզբունքային կարևոր քայլերն են երկրի էներգետիկ իրավիճակի վերլուծության համար, ինչը հնարավորություն է տալիս գնահատել նախորդ միտումները և ձևավորել էներգետիկայի ոլորտի զարգացմանն ուղղված հետագա քաղաքականությունը: Էներգետիկ հաշվեկշռի տվյալները թույլ են տալիս գնահատել էներգաարդյունավետության մակարդակը տնտեսության տարբեր ճյուղերում և կենցաղային ոլորտում: Հարկ է նշել, որ արտանետումների ցուցանիշները սերտորեն կապված են էներգետիկ հաշվեկշռի ցուցանիշների հետ:

Հստակ և բազմակողմանի տեղեկատվության դերն անընդհատ աճում է և թույլ է տալիս որակական եզրակացություններից բացի հնարավորինս ստանալ էներգետիկ քաղաքականության քանակական գնահատականներ:

Ինչպես նշում է ՄԷԳ-ը, էներգետիկ քաղաքականության մշակման նպատակով անհրաժեշտ է հստակ տեղեկատվություն ունենալ վերջնական սպառման վերաբերյալ, մասնավորապես.

- տեղեկատվություն էներգասպառման դրդապատճառների վերաբերյալ,
- տեղեկատվություն էներգասպառման ընթացիկ իրավիճակի վերաբերյալ,
- տեղեկատվություն քաղաքականության տարբերակների իրականացման դեպքում հնարավոր արձագանքների մասին:

<sup>2</sup> <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02008R1099-20240207>

Այս ամենը ձևավորում է տեղեկատվական միջավայր, որը պարբերաբար թարմացվում է և հիմք է հանդիսանում քաղաքականության վերանայման և շտկման համար:

Աշխարհի բոլոր երկրներում դիտվում է վերականգնվող աղբյուրների (հողմային, արեգակնային և այլ) կողմից արտադրվող էներգիայի աճ: Դրանց մասնաբաժնի ավելացումն էներգետիկ հաշվեկշռում երաշխավորում է երկրի էներգետիկ անկախության խելամիտ մակարդակի ապահովումը և ջերմոցային գազերի արտանետման ծավալների կրճատումը:

Էներգետիկ հաշվեկշռի կազմումն անհրաժեշտ է՝

- երկրի էներգետիկ անկախության մակարդակի, այդ թվում՝ էներգետիկ հաշվեկշռում վերականգնվող աղբյուրներում արտադրված էներգիայի մասնաբաժնի գնահատման համար,
- վառելիքի և էներգիայի արտադրության և սպառման կառուցվածքի ուսումնասիրության համար,
- վառելիքի և էներգիայի պաշարների պահանջարկի ուսումնասիրության համար,
- վառելիքաէներգետիկ հաշվեկշռի կառուցվածքի վերլուծության համար՝ այն կատարելագործելու նպատակով,
- երկրի վառելիքաէներգետիկ համալիրի գարգացման նպատակով կապիտալ ներդրումների ծավալների որոշման համար,
- վառելիքաէներգետիկ պաշարների արտահանման և ներմուծման ծավալների որոշման համար,
- էներգախնայողության ներուժի գնահատման համար,
- ջերմոցային գազերի և այլ արտանետումների ծավալների որոշման և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունը նվազեցնելու միջոցառումների մշակման համար և այլ:

Էներգետիկ հաշվեկշռի կազմման ընթացքում հաշվի են առնվել ՄԷԳ-ի և ՄԱԶԾ-ի փորձագետների կողմից ներկայացված հանձնարարականները՝ հաշվեկշռի ստանդարտ ձևաչափի աղյուսակի տողերից և սյունակներից բացառել Հայաստանում բացակայող հոդվածները, ինչպես նաև հաշվեկշռի հաշվետվության բարելավման վերաբերյալ: Դա վերաբերվում է՝ օրինակ.

- փոխակերպման տեխնոլոգիաների մասով՝ Էլեկտրական էներգիայի համար քիմիական ջերմությանը, նավթամշակմանը և այլն,
- էներգապաշարների մասով՝ հում նավթին,
- հաշվետվության աղյուսակներին, գրաֆիկներին և տեքստի որոշ ձևակերպումներին:

### 3. ՀԱՇՎԵԿՇՈՒ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Սույն բաժնում ներկայացվում են էներգետիկ հաշվեկշռում ներառված հիմնական էներգակիրների ելակետային տեղեկությունները և հաշվեկշռի ձևավորման համար կիրառված հիմնական մոտեցումները:

#### 3.1. Էլեկտրական էներգիայի հաշվեկշիռը

##### Ընդհանուր տեղեկություններ և պատկեր

Հայաստանի տնտեսությունում էլեկտրաէներգետիկական առավել զարգացած ոլորտներից մեկն է: Հանրապետությունում գործում են էլեկտրական էներգիայի արտադրության ինչպես ավանդական՝ ԱԷԿ, ՋԷԿ, ՀԷԿ, այնպես էլ այլընտրանքային աղբյուրներ: Կառավարության որոշումները նպաստեցին այլընտրանքային էներգետիկայի մի շարք ծրագրերի զարգացմանը, որոնք ներառում են ինքնավար և լիցենզավորված արեգակնային ՖՎ համակարգերը, արևային ջրատաքացուցիչները, հողմային ներուժի մոնիտորինգը, երկրաջերմային էներգիայի հետախուզական աշխատանքները և այլն:

Հայաստանն էլեկտրական էներգիա է արտահանում Իրան և Վրաստան: Նշված երկրներից իրականացվում է նաև էլեկտրաէներգիայի ներհոսք: Դեպի Իրան արտահանումն իրականացվում է էլեկտրաէներգիա գազի դիմաց փոխանակության սկզբունքով և 2024թ-ին այն կազմել է ամբողջ արտահանվող էլեկտրաէներգիայի 95%՝ կազմելով 1465.1 մլն կՎտժ: Իրանից ներհոսքը 2024թ. կազմել է 7.4 միլիոն կՎտժ, ինչը պայմանավորված է էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմներով: Դեպի Վրաստան էլեկտրաէներգիայի արտահանումն իրականացվում է հիմնականում Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգը Ռուսաստանից սնող 500 կՎ Կավկասիոնի էլեկտրահաղորդման գծի անջատման դեպքում և 2024թ. այն կազմել է 72.7 միլիոն կՎտժ (5%): Ջրառատ սեզոններին Հայաստանի հյուսիսային շրջանների էլեկտրամատակարարումն իրականացվում է Վրաստանից, առանձնացված ռեժիմում և ներհոսքը 2024թ. կազմել է 137.4 միլիոն կՎտժ:

Աղյուսակ 3.1-ում բերված է 2024թ. արտադրված էլեկտրաէներգիան ըստ կայանների, մասնաբաժինը ընդհանուր արտադրանքում և տոկոսային հարաբերակցությունը 2023թ. նկատմամբ: 2024թ. վերականգնվող աղբյուրներից ստացված էլեկտրաէներգիան կազմում է ամբողջ արտադրանքի 32%:

*Աղ. 3.1 2024թ արտադրված էլեկտրաէներգիան (մլն կՎտժ), մասնաբաժինն ընդհանուր արտադրանքում (%) և տոկոսային հարաբերակցությունը 2023թ. նկատմամբ (%):*

	Կայան	2024թ-ին արտադրված էլեկտրաէներգիա (մլն կՎտժ)	Մասնաբաժինն ընդհանուր արտադրանքում (%)	2023թ-ի նկատմամբ (%)
	ՀԱԷԿ	2,830.0	30%	4%
ՋԷԿ	«Երևանի ՋԷԿ»	1,271.3	14%	-7%
	«Հրազդանի ՋԷԿ»	96.6	1%	-71%
	«Հրազդան-5»	373.3	4%	108%
	«ԱրմՓատեր»	1,768.8	19%	-3%
	«Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	6.5	0.07%	13%
<b>Վերականգնվող աղբյուրներ</b>				
ՎԷԿ	«Միջազգային էներգետիկ կորպորացիա»	365.8	4%	-8%
	«Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ»	689.3	7%	27%
	171 փոքր ՀԷԿ-եր <sup>(1)</sup>	1,004.0	11%	43%
ՖՎ	Լիցենզավորված արտադրողներ <sup>(2)</sup>	491.8	5%	29%
	Ինքնավար արտադրողներ <sup>(3)</sup>	487.6	5%	39%
	ՀՈԷԿ <sup>(4)</sup>	1.2	0.01%	-47%
	<b>Ընդամենը արտադրված էլեկտրաէներգիա</b>	<b>9,386.3</b>		<b>7%</b>
	<b>Ընդամենը վերականգնվող աղբյուրներով արտադրված էլեկտրաէներգիա</b>	<b>3,039.8</b>	<b>32%</b>	<b>28%</b>

**Ծանոթություն.**

- (1) Համաձայն ՏԿԵՆ -ի և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2024թ. դրությամբ փոքր ՀԷԿ-երի քանակը կազմել է 171, գումարային դրվածքային հզորությունը՝ 370.6 ՄՎտ:
- (2) 2024թ. լիցենզավորված ՖՎ տեղակայանքների գումարային դրվածքային հզորությունը կազմել է 285.3 ՄՎտ (Արմստատ):
- (3) Ինքնավար արևային ՖՎ տեղակայանքների դրվածքային հզորությունը կազմել է գումարային շուրջ 420.5 ՄՎտ<sup>3</sup>:
- (4) ՀՈԷԿ-ների գումարային դրվածքային հզորությունը՝ 2.9 ՄՎտ:

<sup>3</sup> <https://energyagency.am/category/infografiks/inqnavar-arevayin-kayanner-2025t--hounvar>

Էլեկտրաէներգիան հաղորդվում և բաշխվում է ԲԷՑ և ՀԷՑ ՓԲԸ-ների կողմից, որոնց էլեկտրական ցանցերում տեղի են ունենում անխուսափելի տեխնոլոգիական կորուստներ: 2024թ. դրանք կազմել են 621.8 միլիոն կՎտժ:

### **Տվյալների աղբյուրները**

Յուրաքանչյուր էլեկտրակայանի արտադրության, սեփական կարիքների, ինչպես նաև հաղորդման և բաշխման ընթացքում էլեկտրաէներգիայի կորուստների վերաբերյալ տվյալները տրամադրվել են ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից<sup>4</sup>: Ինքնավար և լիցենզավորված արևային ՖՎ տեղակայանքների արտադրանքի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են Արմստատից և ՀՀ ՀԾԿ պաշտոնական կայքից: Արևային ջրատաքացուցիչների տվյալները ստացվել են ՀՀ մաքսային ծառայությունից՝ «մակնիշ-քանակ» ձևաչափով, որը և առաջարկվում է այս տվյալի հավաքագրման համար: Արդյունաբերության ոլորտի էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ տվյալները տրամադրվել են Արմստատի կողմից: Այլ ոլորտներում էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են ՀՀ ՀԾԿ պաշտոնական կայքից:

### **3.2. Բնական գազի հաշվեկշիռը**

#### **Ընդհանուր տեղեկություններ և պատկեր**

ՀՀ ներքին շուկայում բնական գազի մատակարարումն ու իրացումն ապահովում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն: Գազի փոխադրման համակարգում սպասարկվող մայրուղային գազատարների և գազատարներ-ճյուղավորումների ընդհանուր երկարությունը կազմում է 1668.5 կմ: Գազի փոխադրումն իրականացվում է 1580.9 կմ գազատարի միջոցով<sup>5</sup>: Չօգտագործվող խողովակաշարերը գտնվում են օպերատիվ պահուստի ռեժիմում: Գազի պահուստավորման համար օգտագործվում է նաև «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի տնօրինության ներքո գտնվող Աբովյանի գազի ստորգետնյա պահեստ-կայանը (ԳՍՊԿ): ԳՍՊԿ-ն ունի ռազմավարական նշանակություն, քանի որ ապահովում է հանրապետության գազամատակարարման հուսալիությունը, ինչպես նաև օգտագործվում է գազի սեզոնային և պիկային պահանջարկի ծածկման համար: 2024թ. ընթացքում գազատարներից և ԳՍՊԿ-ից վերցվել է 73.0 միլիոն խմ գազ (9.2%-ով ավել 2023թ. նկատմամբ) և մղվել ԳՍՊԿ՝ 78.0 միլիոն խմ (6.4%-ով ավել 2023թ. նկատմամբ):

Գազաբաշխման ցանցը ներառում է.

- 19869.1 կմ (բարձր, միջին և ցածր ճնշման գազատարներ, ինչպես նաև նրանց վրա տեղակայված ինժեներական կառույցներ),
- 2674 միավոր գազակարգավորիչ կետեր,
- 9613 միավոր անհատական ճնշման կարգավորիչներ,


<sup>4</sup><https://www.mtad.am/pages/armenian-energy-system-production-stations>

<sup>5</sup> <https://armenia-am.gazprom.com/about/today/>

- 1433 գլխամասային չափիչ հանգույցներ,
- 314 էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններ:

Հայաստանի Հանրապետության գազամատակարարման բազմազանեցումը ապահովվում է Ռուսաստանի Դաշնությունից և Իրանի Իսլամական Հանրապետությունից ներկրվող գազի շնորհիվ: Իրանի հետ գործող Համաձայնագրով նախատեսված է իրականացնել գազ էլեկտրաէներգիայի դիմաց փոխանակում: Իրանի հետ պայմանագրային ծավալներն ապահովելու նպատակով կառուցվում է երկշրթա 400 կՎ էլեկտրահաղորդման գիծը:

Նկար 3.1-ում բերված է 2024թ. ներմուծված բնական գազի ծավալը (մլն խմ): 2024թ. ՌԴ-ից ներմուծված բնական գազի ծավալը նվազել է 3.0%, իսկ Իրանից ներմուծված բնական գազի ծավալը աճել է 20.5%: Ընդհամենը՝ 2024թ. ներմուծումը կազմել է 2734.8 մլն խմ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 0.1%-ով:



Նկ. 3.1 2024թ ներմուծված բնական գազի ծավալները (մլն խմ)

Հայաստանն այսօր առաջատար դիրքեր է գրավում աշխարհի այն երկրների շարքում, որոնք բնական գազն օգտագործում են որպես շարժիչային վառելիք: Այն շահավետ է նավթամթերքի օգտագործման համեմատ և բերում է վնասակար նյութերի և ջերմոցային գազերի մթնոլորտ արտանետումների էականորեն կրճատման: Ըստ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի պաշտոնական կայքի այսօր հանրապետության տարածքում գործում են 380 ԱԳԼՃԿ:

Աղյուսակ 3 . 2-ում բերված է 2024թ. բնական գազի սպառումը ըստ ոլորտների (բացառությամբ էներգետիկայի ոլորտի), դրանց մասնաբաժինը ընդհանուր ծավալում և տոկոսային հարաբերակցությունը 2023թ. նկատմամբ:

Աղ. 3.2 Բնական գազի սպառումը, մասնաբաժինը և փոփոխությունն ըստ ոլորտների

Ոլորտ	Սպառված բնական գազ (մլն խմ)	Մասնաբաժինն ընդհանուր ծավալում (%)	2023թ-ի նկատմամբ (%)
Արդյունաբերություն	273.5	14.8%	-6.9%
Տրանսպորտ	360.0	19.5%	-12.6%
Տնային տնտեսություններ	896.3	48.6%	10.9%
Գյուղատնտեսություն <sup>(1)</sup>	128.4	7.0%	46.0%
Ծառայություններ	185.3	10.1%	-8.4%
<b>Ընդհամենը</b>	<b>1843.5</b>		<b>2.2%</b>

**Ծանոթություն.**

(1) ջեռուցման նպատակով ջերմոցներում սպառված բնական գազ:

**Տվյալների աղբյուրները**

Բնական գազի մասով էներգետիկ հաշվեկշռի կազմման համար տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀԾԿՀ-ի, ՏԿԵՆ-ի և Արմստատի կողմից տրամադրված տվյալները: Ներկրված գազի քանակի, գազատարներից և ստորգետնյա գազապահեստ-կայանից վերցված և այնտեղ մղված գազի քանակի, փոխանցման և բաշխման համակարգերում գազի կորուստների, փոխադրված գազի ծավալների, սեփական կարիքների ծախսի, վերականգնված գազի, տրանսպորտի ոլորտում սպառված գազի վերաբերյալ տեղեկատվությունը վերցվել է ՀԾԿՀ-ի պաշտոնական կայքից: Մատակարարված գազի ջերմատվության միջին ամսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հարցման արդյունքում: Արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում էներգետիկ նպատակով բնական գազի սպառման տվյալները, ինչպես նաև առանձին էլեկտրակայաններում օգտագործված բնական գազի վերաբերյալ տվյալները տրամադրվել են Արմստատի կողմից:

**3.3. Ջերմային էներգիայի հաշվեկշիռը**

**Ընդհանուր տեղեկություններ և պատկեր**

Հայաստանի ջերմային էներգիայի էներգետիկ նպատակներով վերջնական սպառման մասնաբաժինը բավականին փոքր է 1%: Ջերմային էներգիան սպառվում է հավասարապես տնային տնտեսություններում և սպասարկման ոլորտում:

1990-ականների սկզբին Հայաստանում տեղի ունեցած էներգետիկ ճգնաժամի պայմաններում Հայաստան բնական գազի մատակարարումն իրականացվում էր անկանոն՝ Հայաստանի սպառողների ցածր վճարունակության և գազատարի պարբերաբար պայթեցումների պատճառով: Որպես հետևանք, կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերը փլուզվեցին: Գազամատակարարման

վերականգնումից հետո տաք ջրի պատրաստման և ջեռուցման համար լայն կիրառություն ստացան անհատական սարքավորումները:

Ներկայում Հայաստանում կենտրոնացված ջերմամատակարարում իրականացվում է փոքր հզորության համակցված ցիկլով աշխատող էլեկտրակայանքներից: «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Լուսաստղ» ՍՊԸ-ի կողմից արտադրվող ջերմային էներգիան օգտագործվում է սեփական կարիքների համար, իսկ «ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ն իրականացնում է ՀՀ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Հովհաննիսյանի, Վարուժանի, Իսահակյանի, Թումանյանի, Քուչակ և Նարեկացի թաղամասերի ջերմամատակարարումը: «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կոգեներացիոն կայանում արտադրված ջերմային էներգիայի վերաբերյալ տվյալները բացակայում են, իսկ էլեկտրական էներգիայի օգտակար առաքումը 2024թ. կազմել է 5.7 միլիոն կՎտժ: 2024թ. «ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ում ջերմային և էլեկտրական էներգիա չի արտադրվել:

2024թ. «Հրազդան-5» կայանի կողմից արտադրվել է 14 հազ ԳՋ ջերմային էներգիա, որը սպառվել է «Հրազդանի ՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից:

Հրազդանի ՋԷԿ-ում էլեկտրական էներգիան արտադրվել է կայանի կոնդենսացիոն տիպի էներգաբլոկներում: Երևանի ՀՇԳՑ-ն 2024թ. աշխատել է կոնդենսացիոն ռեժիմով:

Հայաստանում գործում են փոքր հզորության կաթսայատներ՝ նախատեսված մեկ կամ մի քանի շենքերի ջերմամատակարարման համար:

Ջերմային էներգիայի աղբյուր են հանդիսանում նաև արեգակնային ջրատաքացուցիչները: Անհատական արևային ջրատաքացուցիչների մակերեսների և դրանց տարբեր ոլորտներում՝ մասնավորապես սննդի արդյունաբերությունում և սպասարկման ոլորտում օգտագործման ծավալների վերաբերյալ հստակ տվյալները բացակայում են:

Ըստ փորձագիտական գնահատականի՝ հիմք ընդունելով մաքսային ծառայության 2024թ. ներմուծված արևային ջրատաքացուցիչների «մակնիշ-քանակ» տվյալները, հաշվարկվել է արևային ջերմային էներգիայի 2024թ.-ին՝ 2023թ. նկատմամբ ավելացած ջերմային էներգիան, և այն գումարվել է 2023թ. հաշվեկշռում ընդգրկված մեծությանը: Հայաստանում 2024թ. արեգակնային սարքավորումներով արտադրված ջերմային էներգիան կազմել է 723.8 ՏՋ շուրջ 1.1 անգամ ավել քան 2023թ.: Այդ էներգիայի մասնաբաժինն աննշան է ընդհանուր էներգետիկ հաշվեկշռում և հաշվի է առնված «Վերականգնվող էներգակիրների հաշվեկշիռը» բաժնում:

## Տվյալների աղբյուրները

Ջերմային էներգիայի տվյալների աղբյուրներ են հանդիսացել ջերմային կայանների մասով՝ Արմատատի, իսկ արեգակնային ջրատաքացուցիչների մասով՝ հիմք է հանդիսացել մաքսային ծառայության տեղեկատվությունը:

### 3.4. Նավթամթերքի հաշվեկշիռը

#### Ընդհանուր տեղեկություններ և պատկեր

Նավթամթերքի հաշվեկշռում բերվում են տվյալներ հետևյալ նավթամթերքի վերաբերյալ.

- շարժիչային վառելիք (շարժիչային բենզին, դիզելային վառելիք, բենզինային վառելիք ռեակտիվ շարժիչների համար, ավիակերոսին),
- հեղուկ նավթային գազեր,
- մազութ և նավթային բիտում,
- այլ նավթամթերք (այլ կերոսին, հատուկ բենզիններ, քսայուղեր, պարաֆին, այլ նավթամթերք):

Հայաստանում նավթի արդյունահանում չի իրականացվում և նավթամթերքի բոլոր տեսակները ներմուծվում են: Հայաստանում սահմանափակ ծավալով օգտագործվում են ներմուծված նավթամթերքի որոշ տեսակներ ոչ էներգետիկ նպատակով՝ լաքերի, ներկերի և այլ ապրանքատեսակների արտադրության համար: Ոչ էներգետիկ նպատակով օգտագործվում են նաև ներմուծվող բիտումներ և մազութ:

Աղյուսակ 3.3-ում բերված է տարբեր տեսակի նավթամթերքի սպառումը համապատասխան ոլորտներում:

Աղ. 3.3 Նավթամթերքի սպառումը համապատասխան ոլորտներում (%)

Ոլորտ	Շարժիչային բենզին	Դիզելային վառելիք	Հեղուկ նավթային գազ	Այլ
Տրանսպորտ	99.99%	82.9%	91.6%	-
Արդյունաբերություն <sup>(1)</sup>	0.001%	8.1% <sup>(1)</sup>	0.04%	-
Գյուղատնտեսություն <sup>(2)</sup>	-	9.0% <sup>(2)</sup>	-	-
Ծառայություններ	-	-	6.0%	-
Տնային տնտեսություններ	-	-	2.3%	-
Ոչ էներգետիկ նպատակներով	0.03%	0.9%	-	100%

## **Ծանոթություն.**

*Դիզելային վառելիքի աննշան ծավալներ սպառվում են նաև դիզելային գեներատորներում, որոնք հանդիսանում են էլեկտրական էներգիայի պահուստային աղբյուրներ: Սպառման այս ոլորտի վերաբերյալ տվյալները բացակայում են:*

- (1) Արդյունաբերության ոլորտում դիզելային վառելիքը օգտագործվում է փարբեր տեսակի մեխանիզմներ աշխատեցնելու համար (հորատման սարքեր ամբարձիչների, տելեսկոպիկ աշտարակներ և այլ մեխանիզմներ): Արդյունաբերության ոլորտի ամենախոշոր սպառողներն են հանքագործական արդյունաբերությունը և գունավոր մեդալուրգիան:*
- (2) Կրակտորներ, կոմբայններ և այլ մեխանիզմներ*

## **Տվյալների աղբյուրները**

Նավթամթերքի ներմուծման և արտահանման վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև արդյունաբերական ոլորտում նավթամթերքի սպառման ծավալների, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային և ընդհանուր բերքահավաքի տարածությունների վերաբերյալ տվյալները և գյուղատնտեսական ոլորտում վառելանյութի ծախսի վերաբերյալ գյուղատնտեսության ոլորտի փորձագիտական գնահատականը տրամադրվել են Արմստատի կողմից:

## **3.5. Ածխի հաշվեկշիռը**

### **Ընդհանուր տեղեկություններ և պատկեր**

Ածխի հաշվեկշիռը կազմելու համար օգտագործվել են Արմստատի տվյալները ներմուծվող կոքսի և կիսակոքսի, անտրացիտի, լիգնիտի և այլ ածուխների մասին:

2024թ. էներգետիկ նպատակով սպառված ածուխների ծավալները կազմել են ընդհանուր սպառման ընդամենը 0.5%-ը: Ածուխների սպառման հիմնական ծավալը՝ շուրջ 86.4%-ը, բաժին է ընկնում տնային տնտեսությունների ոլորտին:

Ջաջուռի և Դիլիջանի շրջակայքում առկա են լիգնիտների հանքեր: Դրանք չունեն արդյունաբերական նշանակություն, և, ըստ փորձագիտական գնահատականների, շուրջ 500 ընտանիք իրականացնում է լիգնիտների ձեռքով հավաքում: Ուստի, 2024թ. լիգնիտների արդյունահանումը պահպանվել է 2023թ. մակարդակին:

### **Տվյալների աղբյուրները**

Ածխի ներմուծման և արտահանման, ինչպես նաև արդյունաբերության ոլորտում ածխի սպառման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրված է Արմստատի կողմից: Լիգնիտների արդյունահանման վերաբերյալ տվյալները որոշվել են փորձագիտական գնահատականների հիման վրա:

### 3.6. Փայտի և այլ բիովառելիքի հաշվեկշիռը

#### Ընդհանուր տեղեկություններ և պատկեր

Փայտը և այլ բիովառելիքը համարվում են վերականգնվող էներգապաշարներ:

Բիովառելիք են հանդիսանում.

- արդյունաբերական թափոնները,
- պինդ կենցաղային թափոնները,
- պինդ կենսազանգվածը (այդ թվում՝ փայտածուխը),
- կենսազազը:

Վառելափայտը և փայտանյութը Հայաստանում ստանում են հետևյալ եղանակներով.

- սանիտարական ծառահատումներ (պինդ կենսազանգված),
- ապօրինի ծառահատում (պինդ կենսազանգված),
- տապալված չորուկ (պինդ կենսազանգված),
- փայտամշակման և կահույքի պատրաստման թափոններ (արդյունաբերական թափոններ),
- ներմուծում:

Ինչպես ներկայացված է աղյուսակ 3.4-ում, փայտը, փայտանյութը և այլ բիովառելիքները սպառվում են արդյունաբերության, տնային տնտեսությունների և ծառայությունների ոլորտներում: Այս ցուցանիշներից երևում է, որ հիմնական սպառողը բնակչությունն է:

Աղ. 3.4 Փայտի, փայտանյութի և այլ բիովառելիքի սպառումը համապատասխան ոլորտներում (%)

	Փայտանյութ, վառելափայտ, տաշեղ	Կոպտոն և այլ կոշտ մնացորդներ	Փայտածուխ	Գոմաղբ
Արդյունաբերություն	0.01%	0.03%	0.7%	-
Տնային տնտեսություններ	94.99%	99.97%	94.3%	100.0%
Ծառայություններ	5.0%	0.0%	5.0%	-

Անհատական կենսազազային տեղակայանքների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը բացակայում է: Այս տեխնոլոգիաների համար Հայաստանում հիմնականում օգտագործվում է գոմաղբը: Գոմաղբն էներգետիկ նպատակներով օգտագործվում է նաև որպես վառարանային վառելանյութ՝ հիմնականում ջեռուցման նպատակներով:

Հայաստան են ներմուծվում սահմանափակ ծավալներով կոպտոն և այլ կոշտ մնացորդներ:

## Տվյալների աղբյուրները

Ներմուծվող և արտահանվող փայտի և այլ բիովառելիքի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է Արմատատի կողմից: Տնային տնտեսություններում վառելափայտի սպառման տվյալները նույնպես տրամադրվել են Արմատատի կողմից՝ ձևավորված հարցումների արդյունքներով: Գոմաղբի սպառման տվյալները ստացվել են փորձագիտական հաշվարկների հիման վրա, հաշվի առնելով Արմատատի կողմից հրապարակված գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի տարեկան թվերը:

Արմատատը տրամադրել է նաև տեղեկատվություն արդյունաբերության ոլորտում վառելափայտի և փայտանյութի սպառման վերաբերյալ:

### 3.7. Վերականգնվող էներգակիրների հաշվեկշիռը

#### Ընդհանուր տեղեկություններ և պատկեր

Այս բաժնում դիտարկվում են հիդրոէներգիան, հողմային էներգիան, արևային էներգիան և երկրաջերմային էներգիան:

Աղյուսակ 3.5-ում ներկայացված է արտադրված էլեկտրաէներգիան (մլն կՎտժ), դրվածքային հզորությունը (ՄՎտ), մասնաբաժինն ընդհանուր արտադրանքում և տոկոսային հարաբերակցությունը 2023թ. նկատմամբ:

Աղ. 3.5 2024թ. արտադրված էլեկտրաէներգիան (մլն կՎտժ), դրվածքային հզորությունը (ՄՎտ), մասնաբաժինն ընդհանուր արտադրանքում (%) և տոկոսային հարաբերակցությունը 2023թ. նկատմամբ (%):

	Կայան	2024թ-ին արտադրված էլեկտրաէներգիա (մլն կՎտժ)	Դրվածքային հզորություն (ՄՎտ)	Մասնաբաժինն ընդհանուր արտադրանքում (%)	2023թ-ի նկատմամբ (%)
ԵԴ	«Միջազգային էներգետիկ կորպորացիա»	365.8	561.4	4%	-8%
	«Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ»	689.3	404.2	7%	27%
	171 փոքր ՀԷԿ-եր	1,004.0	370.6	11%	43%
ՑԺ	Լիցենզավորված արտադրողներ	491.8	285.3	5%	29%
	Ինքնավար արտադրողներ	487.6	420.5	5%	39%
	ՀՈԷԿ	1.2	2.9	0.01%	-47%
	<b>Ընդամենը վերականգնվող աղբյուրներով արտադրված էլեկտրաէներգիա</b>	<b>3,039.8</b>		<b>32%</b>	<b>28%</b>

Վերականգնվող էներգիայի պաշարներից Հայաստանում առավել զարգացած է հիդրոէներգետիկան:

Հայաստանն ունի արևային էներգիայի զգալի ներուժ: Արևային էներգետիկան ներկայացված է ջրատաքացուցիչներով և էլեկտրական էներգիա արտադրող ՖՎ տեղակայանքներով: Արևային տեխնոլոգիաների կիրառմամբ տաք ջրի և էլեկտրական էներգիայի արտադրանքի ծավալների աճը պահպանվել է նաև 2024թ., ինչը պայմանավորված է ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությամբ<sup>6,7,8,9</sup>, ինչպիսիք են սակագների և սահմանաչափերի ներմուծումը և այլն:

Այդ նախաձեռնությունները հանգեցրել են 2023թ. նկատմամբ արևային տեխնոլոգիաների կողմից արտադրված էներգիայի շուրջ 1.3 անգամ աճի:

Վերականգնվող էներգակիրների առաջնային արտադրության մեջ արևային տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված էներգիայի մասնաբաժինը 2024թ. կազմել է 28%: Այս ցուցանիշը զգալի աճել է 2023թ. համեմատ, ինչը պայմանավորված է արևային տեխնոլոգիաների կիրառության ընդլայնմամբ:

Երկրաջերմային էներգետիկան Հայաստանում ներկայացված է մի քանի փորձնական տեղակայանքներով, որոնց արտադրանքն այնքան փոքր է, որ դրանք էներգետիկ հաշվեկշռում չեն ներառվել:

### **Տվյալների աղբյուրները**

ՀոԷԿ-երի արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է ՀՀ վիճակագրական կոմիտեից: Արևային տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվական աղբյուր են հանդիսացել «ՀԷՑ» ՓԲԸ-ն, մաքսային ծառայությունը, ինչպես նաև ՀՎԷԷՀ-ն: Արևային ժամերի վերաբերյալ տվյալների աղբյուր է հանդիսացել Հայաստանի արևային քարտեզը, ինչպես նաև լիցենզավորված ՖՎ տեղակայանքների դրվածքային հզորությունների և արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների վերաբերյալ ՀԾԿՀ-ի պաշտոնական կայքում առկա տեղեկատվությունը:

<sup>6</sup> [https://energyagency.am/page\\_pdf/arevayin-energetika](https://energyagency.am/page_pdf/arevayin-energetika)

<sup>7</sup> <https://www.ena.am/Info.aspx?id=11&lang=1>

<sup>8</sup> <https://www.himnadram.org/en/1660039870>

<sup>9</sup> [https://energyagency.am/page\\_pdf/arevayin-energetikayi-ardyounavet-ogtagor](https://energyagency.am/page_pdf/arevayin-energetikayi-ardyounavet-ogtagor)

## 4. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


Այս բաժնում ներկայացված է հիմնական ցուցանիշների վերաբերյալ ինֆորմացիա և վերլուծություն: Այդ ցուցանիշներն են առաջնային էներգապաշարների արտադրություն, ներմուծում, առաջնային էներգիայի մատակարարում, առաջնային էներգիայի մատակարարում ՀՆԱ-ի և մեկ շնչի հաշվով, վերականգնվող էներգիայի մասնաբաժին, էներգապաշարների սպառումն ըստ վառելիքի և ոլորտների:

### 4.1 Առաջնային էներգապաշարների արտադրություն

Առաջնային էներգապաշարների ներքին արտադրության հիմնական աղբյուր են հանդիսանում միջուկային էներգիան և հիդրոէներգիան, որոնց մասնաբաժինը 2024թ. կազմել է համապատասխանաբար 66.8% և 16.0%: ՀԷԿ-երի արտադրած էներգիայի ծավալներն աճել են նախորդ տարվա նկատմամբ, հիմնականում պայմանավորված փոքր ՀԷԿ-երով, որոնք ցույց են տալիս 43% աճ:

2015-2016թ. տվյալները վերականգնվող էներգիայի արտադրման վերաբերյալ հավաստի չեն, քանի որ այդ տարիների վառելիքայտից, այլ կենսազանգվածից (աթար) և արևային տեղակայանքներից էներգիայի արտադրության ծավալները գերազնահատված էին: Սկսած 2017թ. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվում է տնային տնտեսություններում սպառված վառելիքայտի և այլ կենսազանգվածի ծավալների ճշգրտում: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ տնային տնտեսություններում վառելիքայտի և աթարի էներգետիկ նպատակներով սպառման ծավալները 2018-2024թթ. ընթացքում աստիճանաբար նվազել են, 2024թ. համապատասխանաբար կազմելով 33.9 կտ ն. հ. և 53.0 կտ ն. հ.:


Ֆոտովոլտային և արևային ջրատաքացուցիչներով տեղակայանքների զարգացման խրախուսման արդյունքում զգալի աճել են արևային էներգիայի արտադրության ծավալները: Համեմատության համար նշենք, որ եթե 2023թ. արևային տեխնոլոգիաների կիրառմամբ էներգիայի արտադրության մասնաբաժինը կազմում էր 7.7%, ապա 2024թ. այն ավելացել է մինչև 9.2%:



Նկ. 4.1 Առաջնային էներգապաշարների արտադրություն (կտ ն.հ.)

## 4.2 Ներմուծում


Հայաստանը շարունակում է մնալ ներմուծվող էներգապաշարներից մեծ կախվածություն ունեցող երկիր: 2024թ. ներմուծվող էներգապաշարների ծավալները կազմել են 72.3% առաջնային էներգիայի մատակարարման նկատմամբ: 2024թ. էներգապաշարների ներմուծումը ավելացել է 2.1% 2023թ. նկատմամբ: Սա հիմնականում պայմանավորված է նավթամթերքի ներմուծման ծավալների ավելացմամբ:



Նկ. 4.2 Առաջնային ֆերդապաշարների ներմուծում (կտ ն.հ.)

### 4.3 Ընդամենը առաջնային ֆերդապաշարի մատակարարում


2024թ. առաջնային ֆերդապաշարի մատակարարման ծավալը աճել է 3.2% 2023թ. նկատմամբ:



Նկ. 4.3 Ընդամենը առաջնային ֆերդապաշարի մատակարարում (%)

#### 4.4 Համախառն ներքին արդյունքի էներգատարություն


Ինչպես երևում է բերված գրաֆիկներից 2015-2019թթ. տեղի է ունեցել համախառն ներքին արդյունքի էներգատարության անընդհատ նվազում, բացառությամբ 2020թ. 2024թ. արձանագրվում է էներգատարության 4.3% նվազում 2023թ. նկատմամբ: Նման նվազման պատճառն է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 7.8%-ով աճը (համաձայն «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2025» «11.10. Համախառն ներքին արդյունքի արտադրությունը» ենթաբաժնի ՀՆԱ-ն 2023թ. կազմել է 9453.2 միլիարդ դրամ, իսկ 2024թ.՝ 10,193.4 միլիարդ դրամ):



Նկ. 4.4 Համախառն ներքին արդյունքի էներգատարությունը (կտ ն.հ./մլրդ դրամ)

#### 4.5 Առաջնային էներգիայի մատակարարում մեկ շնչի հաշվով


2024թ. դիտվում է նաև մեկ շնչի հաշվով առաջնային էներգիայի համախառն մատակարարման աճ՝ 1.8% 2023թ. նկատմամբ:



Նկ. 4.5 Առաջնային էներգիայի մատակարարում մեկ շնչի հաշվով (տր ն.հ.)

#### 4.6 Վերականգնվող էներգիայի առաջնային արտադրության մասնաբաժինն առաջնային էներգիայի մատակարարման նկատմամբ


Ինչպես արդեն նշվել էր, 2015-2016թթ.-ի տվյալները հավաստի չեն, քանի որ այդ տարիներին վառելիքայտից, այլ կենսազանգվածից (աթար) և արևային տեղակայանքներից էներգիայի արտադրության ծավալները գերազանահատված էին: 2017-2019թթ. վերոնշված էներգապաշարների ծավալների ճշտման արդյունքում դիտվում է առաջնային էներգիայի մատակարարման նկատմամբ վերականգնվող էներգիայի արտադրության մասնաբաժնի նվազում: 2020թ. այդ նվազումը ունի խիստ արտահայտված տեսք՝ ՀԷԿ-երի արտադրանքի նվազեցման արդյունքում: 2021թ. վերականգնվող էներգիայի արտադրության մասնաբաժնը աճել է, ինչը պայմանավորված է ՀԷԿ-երի և արևային կայանների արտադրանքի ավելացմամբ: 2024թ. նկատվում է վերականգնվող էներգիայի արտադրության մասնաբաժնի ավելացում, ինչը պայմանավորված է արևային էներգիայի և ՀԷԿ-երի արտադրության ծավալների աճով:



Նկ. 4.6 Վերականգնվող էներգիայի առաջնային արտադրության մասնաբաժինն առաջնային էներգիայի մատակարարման նկատմամբ (%)

#### 4.7 Էներգապաշարների սպառումը սեփական կարիքների համար

2024թ. դիտվում է սեփական կարիքների վրա էներգակիրների ընդհանուր ծախսի որոշակի նվազում 2023թ. նկատմամբ՝ բնական գազի դեպքում չնայած որ ընդհանուր գազի սպառումը կայաններում նվազել է, սեփական կարիքների ծավալը աճել է 3.9%-ով: Այս աճը պայմանավորված է "Հրազդան 5" կայանի գազի սպառման ավելացումով: Էլեկտրական էներգիայի դեպքում ծախսը նվազել է 1.3%-ով, ինչը պայմանավորված է ԶԷԿ-երի արտադրանքի նվազմամբ:




Նկ. 4.7 Էներգապաշարների սպառումը սեփական կարիքների համար (կգ. ն. հ)

#### 4.8 Էներգապաշարների կորուստները հաղորդման և բաշխման ընթացքում

Էներգապաշարների կորուստները 2024թ. աճել են 7.0%-ով 2023թ. նկատմամբ: Դա պայմանավորված է բնական գազի և էլեկտրաէներգիայի բաշխման և հաղորդման համակարգերում կորուստների ավելացմամբ:


Բնական գազի ընդհանուր կորուստները, որոնք անարդյունավետության հիմնական ցուցանիշ են, կապված են սպառվող բնական գազի ծավալի հետ և արտացոլում են հնացող ենթակառուցվածքները, անբավարար արդիականացման ջանքերը և սահմանափակ ներդրումները:



Նկ. 4.8 Էներգապաշարների կորուստները հաղորդման և բաշխման ընթացքում (կտ. ն . հ)

#### 4.9 Էներգապաշարների սպառումը ըստ ոլորտների


2024թ. էներգիայի սպառման խոշոր ոլորտ է հանդիսացել տնային տնտեսությունները՝ 37.1% ընդհանուր էներգետիկ նպատակով վերջնական սպառման ծավալների օգտագործման նկատմամբ: Տրանսպորտի ոլորտի մասնաբաժինը կազմել է 30.7%, ծառայությունների ոլորտի մասնաբաժինը՝ 13.8%, արդյունաբերության ոլորտի մասնաբաժինը՝ 13.8%, իսկ գյուղատնտեսության մասնաբաժինը կազմել է 4.6%:



Նկ. 4.9 Էներգապաշարների սպառումն ըստ ոլորտների (կտ. ն. հ)

#### 4.9.1 Էներգապաշարների սպառումը արդյունաբերության ոլորտում

Արդյունաբերության՝ ներառյալ շինարարության ոլորտում 2024թ. դիտվում է էներգիայի սպառման որոշակի նվազում՝ 3.0% 2023թ.-ի նկատմամբ: Էներգիայի սպառման նվազումը պայմանավորված է բնական գազի սպառման ծավալների նվազմամբ: Նվազել է այս ոլորտների էներգատարությունը՝ շուրջ 8.0%-ով 2023թ.-ի նկատմամբ:




Նկ. 4.10 Էներգապաշարների սպառումն (կտ. ն. հ) ու էներգատարությունը (կտ. ն. հ/մլրդ. դրամ) արդյունաբերության և շինարարության ոլորտներում

#### 4.9.2 Էներգապաշարների սպառումը տրանսպորտի ոլորտում

Տրանսպորտի ոլորտում 2024թ. դիտվում է էներգիայի սպառման աճ՝ շուրջ 1.5% 2023թ. նկատմամբ: Դա պայմանավորված է հիմնականում նավթամթերքի սպառման ծավալների ավելացմամբ:


Տրանսպորտի ոլորտի էներգատարությունը աճել է՝ շուրջ 6.0%-ով 2023թ. նկատմամբ: Դա հիմնականում պայմանավորված է տրանսպորտի ոլորտի ավելացված արժեքի շուրջ 4.3% նվազմամբ (համաձայն «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2025» «11.10. Համախառն ներքին արդյունքի արտադրությունը» ենթաբաժնի տրանսպորտի ոլորտի ավելացված արժեքը 2023թ. կազմել է 363.2 միլիարդ դրամ, իսկ 2024թ.՝ 347.8 միլիարդ դրամ):

2020թ. տրանսպորտի ոլորտի էներգատարությունը կտրուկ աճել է 2019-ի նկատմամբ տրանսպորտի ոլորտում 34.8% սպառման նվազման պատճառով, ինչը հիմնականում պայմանավորված էր համաճարակով և պատերազմով :



Նկ. 4.11 Էներգապաշարների սպառումն (կտ. ն. հ) ու էներգատարությունը (կտ. ն. հ/մլրդ. դրամ) տրանսպորտի ոլորտում (կտ. ն. հ)

Բերված գրաֆիկից երևում է, որ տրանսպորտի ոլորտում տեղի է ունեցել բնական գազի սպառման նվազում, նավթամթերքի սպառման աճ և էլեկտրական էներգիայի չնչին նվազում: Տրանսպորտի ոլորտում սպառված բնական գազի մասնաբաժինը 2024թ.-ին կազմել է սպառված էներգիայի 33.4%-ը, նավթամթերքի մասնաբաժինը՝ 65.8%, իսկ էլեկտրական էներգիայի մասնաբաժինը՝ 0.8%: Պետք է նկատի ունենալ, որ մարդատար էլեկտրական մեքենաների կողմից սպառված էլեկտրաէներգիան տրանսպորտի ոլորտի ընդհանուր սպառման մեջ ներառված է մասնակիորեն, հիմնական մասը ներառված է տնային տնտեսությունների ոլորտում:




Նկար 4.12 Բնական գազի, նավթամթերքի և էլեկտրաէներգիայի մասնաբաժինները տրանսպորտի ոլորտում (%)

### 4.9.3 Էներգապաշարների սպառումը տնային տնտեսությունների ոլորտում

2024թ. տնային տնտեսություններում էներգապաշարների սպառումը աճել է 8.7%-ով 2023թ. նկատմամբ: Դա հիմնականում պայմանավորված է նավթամթերքի սպառման ծավալների 17.0% և բնական գազի 11.0% ավելացմամբ:

Տնային տնտեսությունների էներգատարությունը 2015-2017թթ. գտնվում էր գրեթե նույն մակարդակին՝ շուրջ 285 կտ ն.հ./մլրդ դրամ: 2019թ.-ից դիտվում է էներգատարության աճ մինչև 2021թ.: 2024թ. աճել է 2.4%-ով 2023թ.-ի նկատմամբ: Դա հիմնականում պայմանավորված է էներգապաշարների սպառման աճով և տնային տնտեսությունների ոլորտի ավելացված արժեքի շուրջ 6.2% ավելացմամբ (համաձայն «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2025» «11.10. Համախառն ներքին արդյունքի արտադրությունը» ենթաբաժնի տնային տնտեսությունների ավելացված արժեքը 2023թ. կազմել է 3.1 միլիարդ դրամ, իսկ 2024թ.՝ 3.3 միլիարդ դրամ):




Նկ. 4.12 Էներգապաշարների սպառումն (կտ. ն. հ) ու էներգատարությունը (կտ. ն. հ/մլրդ դրամ) տնային տնտեսությունների ոլորտում

#### 4.9.4 Էներգապաշարների սպառումը գյուղատնտեսության ոլորտում

Գյուղատնտեսության ոլորտում էներգիայի սպառումը 2024թ. աճել է 2023թ. նկատմամբ՝ շուրջ 29.3%-ով: Դա հիմնականում պայմանավորված է բնական գազի սպառման ծավալների 46.2% ավելացմամբ:

Գյուղատնտեսության ոլորտի էներգատարությունը աճել է 30 . 3%-ով 2023թ.-ի նկատմամբ: Դա հիմնականում պայմանավորված է էներգապաշարների սպառման աճով ի համեմատ ոլորտի ավելացված արժեքի շուրջ 0.8% նվազման հետ (համաձայն «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2025» «11.10. Համախառն ներքին արդյունքի արտադրությունը» ենթաբաժնի գյուղատնտեսության ավելացված արժեքը 2023թ. կազմել է 801.8 միլիարդ դրամ, իսկ 2024թ.՝ 795.7 միլիարդ դրամ):

Մինչև 2020 թվականը ջերմոցային տնտեսություններում բնական գազի սպառումը ներառված էր արդյունաբերության ոլորտում: 2020 թվականին գյուղատնտեսության համար կիրառվել է գազի հատուկ սակագին, որից հետո դրա սպառումը դիտարկվել է առանձին:




Սկ. 4.13 Էներգապաշարների սպառումն (կտ. ն. հ) ու էներգատարությունը (կտ. ն. հ/մլրդ. դրամ) գյուղատնտեսության ոլորտում

#### 4.9.5 Էներգապաշարների սպառումը ծառայությունների ոլորտում

Ծառայությունների և այլ ոլորտներում էներգապաշարների սպառումը 2024թ.-ին աճել է՝ շուրջ 1.5%-ով 2023թ.-ի նկատմամբ: Դրա հիմնական պատճառը նավթամթերքի և ածուխի սպառման ծավալների ավելացումն է:

Այս ոլորտի էներգատարությունը շարունակական նվազում էր 2015-2017թթ.-ին և աճել է միայն 2018 և 2019թթ.-ին, այնուհետև շարունակել է նվազել: Ծառայությունների և այլ ոլորտների էներգատարությունը 2024թ.-ին 10.7%-ով նվազել է 2023թ.-ի նկատմամբ:



Նկ. 4.14 Էներգապաշարների սպառումն (կտ. ն. հ) ու Էներգապարունը (կտ. ն. հ/մլրդ. դրամ) ծառայությունների և այլ ոլորտներում

## 5. ԱՄՓՈՓՈՒՄ

### Էներգետիկ հաշվեկշռի մշակման նպատակով՝

- ուսումնասիրվել են 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020, 2021, 2022 և 2023 թվականների Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռները, դիտարկվել են հիմնական ցուցանիշները, դրանց փոփոխության պատճառները, ինչպես նաև բացակա տվյալները լրացնելու համար օգտագործվող մեթոդաբանությունները
- իրականացվել է պաշտոնական տվյալների հավաքագրում Արմստատից, ՀԾԿՀ-ից, ՏԿԵՆ-ից, ՀՎԷԷՀ-ից,
- կազմվել է Հայաստանի 2024թ. էներգետիկ հաշվեկշիռը Եվրոստատի և Միջազգային էներգետիկ գործակալության ձևաչափերով,
- Հայաստանի 2024թ. նախնական էներգետիկ հաշվեկշիռը քննարկվել է Արմստատի և ՏԿԵՆ մասնագետների հետ: Որոշ փոփոխություններ են կատարվել Արևային ինքնավար արտադրողների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի, ներմուծված ուրանի քանակի, արդյունաբերության ոլորտում ջերմային էներգիայի արտադրության և սպառման, Փոքր ՀԷԿ-երի և ՀՈԷԿ-ների քանակի և ընդհանուր հզորության տվյալներում:
- կատարվել է 2015-2024թթ. հաշվեկշիռներում ներառված ցուցանիշների փոփոխությունների վերլուծություն,
- մշակվել է Տեղեկատվական թերթիկ՝ հիմք ընդունելով կազմված հաշվեկշիռը:

### Տվյալների հավաքագրման բարելավման առաջարկներ:

1. Էներգետիկ հաշվեկշռի «Էներգետիկ նպատակներով վերջնական սպառում» բաժնում ըստ ոլորտների էլեկտրական էներգիայի և բնական գազի սպառման ծավալների վերաբերյալ ավելի ճշգրիտ տեղեկատվություն ներկայացնելու նպատակով առաջարկվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին բաժանորդային բազաներում կիրառել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը (<https://armstat.am/am/?nid=370>):
2. Արևային ջերմային էներգիայի արտադրության հաշվարկի/գնահատման ճշգրտությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է արևային ջրատաքացուցիչների տվյալները ստանալ ՀՀ մաքսային ծառայությունից «մակնիշ-քանակ» ձևաչափով:

## 6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 2015-2017թթ. տեղի է ունեցել առաջնային էներգիայի համախառն մատակարարման ավելացում, իսկ 2018թ. որոշակի նվազում (2018թ. շուրջ 4.5%-ով նվազում 2017թ. նկատմամբ): Հետագայում տեղի է ունեցել առաջնային էներգիայի մատակարարման ավելացում՝ 2019թ. 8.1%-ով 2018թ. նկատմամբ, 2020թ. 5.6%-ով 2019թ. նկատմամբ, 2021թ. 4.8%-ով 2020թ. նկատմամբ, 2022թ. 6.2%-ով 2021թ. նկատմամբ; 2023թ. 2022թ. նկատմամբ 3.7%-ով նվազումից հետո այն 2024թ. ավելացել է 3.2%-ով 2023թ. նկատմամբ:
2. Համախառն ներքին արդյունքի էներգատարությունը 2015-2024թթ. շարունակական նվազել է, հիմնականում ՀՆԱ-ի աճի պատճառով, բացառությամբ 2020թ., ինչը պայմանավորված էր կովիդով և պատերազմով:
3. 2024թ. մեկ շնչի հաշվով առաջնային էներգիայի համախառն մատակարարման ծավալը աճել է 1.8%-ով 2023թ. նկատմամբ, ինչը պայմանավորված է ՀՆԱ-ի ավելացմամբ:
4. Առաջնային էներգապաշարների ներքին արտադրության հիմնական աղբյուրը շարունակում է մնալ միջուկային էներգիան, որի մասնաբաժինը 2024թ. կազմել է ներքին արտադրության 66.8%-ը, և հիդրոէներգիան՝ 16.0%-ը:
5. Տնային տնտեսություններում վառելիքայտի և աթարի էներգետիկ նպատակներով սպառման ծավալները 2018-2024թթ. ընթացքում աստիճանաբար նվազել են, 2024թ. համապատասխանաբար կազմելով 33.9 կտ ն . հ. և 53.0 կտ ն . հ.:
6. Զգալի աճել են արևային էներգիայի տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրության ծավալները, որոնց մասնաբաժինը առաջնային էներգապաշարների ներքին արտադրության ծավալում 2024թ. կազմել է 9.2%:
7. Հայաստանը շարունակում է մնալ էներգապաշարների ներմուծումից մեծ կախվածություն ունեցող երկիր: Ներմուծվող էներգապաշարների ծավալը 2024թ. կազմել է առաջնային էներգիայի համախառն մատակարարման 72.3%, իսկ ներքին արտադրությունը՝ 27.7%:
8. 2024թ. դիտվում է սեփական կարիքների վրա էներգիայի ծախսերի 0.4%-ով նվազում 2023թ. նկատմամբ: Վերջինս պայմանավորված է հին ՋԷԿ-երի արտադրանքի նվազմամբ և վերականգնվող էներգիայի կայանների արտադրանքի զգալի աճով: Միևնույն ժամանակ էներգապաշարների կորուստները 2024թ. աճել են 7.0%-ով 2023թ. նկատմամբ:
9. Էներգիայի սպառման հիմնական ոլորտները են հանդիսացել տնային տնտեսությունները և տրանսպորտը, որոնց մասնաբաժինը, էներգետիկ նպատակով վերջնական սպառման ծավալների նկատմամբ, 2024թ. կազմել են համապատասխանաբար՝ 37.1% և 30.7%: Ծառայությունների ոլորտի մասնաբաժինը 2024թ. կազմել է 13.8%, արդյունաբերության ոլորտինը՝ 13.8%, իսկ գյուղատնտեսության ոլորտինը՝ 4.6%:
10. 2023թ. նկատմամբ 2024թ. դիտվում է էներգիայի սպառման.
  - նվազում արդյունաբերությունում՝ 3.0%,
  - ավելացում տրանսպորտի ոլորտում՝ 1.5%,

- ավելացում տնային տնտեսություններում՝ 8.7%,
- ավելացում գյուղատնտեսության ոլորտում՝ 29.3%,
- ավելացում ծառայությունների և այլ ոլորտներում՝ 1.5%:

11. 2023թ. նկատմամբ 2024թ. դիտվում է էներգատարության.

- նվազում արդյունաբերության ոլորտում՝ 8.0%,
- ավելացում տրանսպորտի ոլորտում՝ 6.0%,
- ավելացում տնային տնտեսություններում՝ 2.4%,
- ավելացում գյուղատնտեսության ոլորտում՝ 30.3%,
- նվազում ծառայությունների և այլ ոլորտներում՝ 10.7%:

Էներգատարության մեծությունների փոփոխությունները պայմանավորված են համախառն ներքին արդյունքի և դրա բաղադրիչների փոփոխությամբ:

12. Տրանսպորտի ոլորտն ըստ էներգիայի սպառման կառուցվածքի 2024թ. ներկայացված է.

- նավթամթերք՝ 65.8%,
- բնական գազ՝ 33.4%,
- էլեկտրական էներգիա՝ 0.8%:

Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռը 2024 թվականի համար, Եվրոստատի ձևաչափով, ագրեգացված, (հազար տ ն. հ.)

h/h	Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռ, 2024թ.	Ընդամենը	Ածուխ	Նավթամթերք	Բնական գազ	Վերականգնվող էներգակիրներ	Միջուկային էներգիա	Զերմային էներգիա	Էլեկտրական էներգիա
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.1	Առաջնային արտադրություն	1,104.0	0.0			366.6	737.4		
1.2	Ներմուծում	3,165.8	16.2	857.8	2,261.7	17.7			12.5
1.3	Միջազգային ավիացիոն բունկեր	-106.1		-106.1					
1.4	Արտահանում	-132.7	-0.1	-0.3		-0.1			-132.2
1.5	Պահեստում փոփոխություններ	-52.0	0.0	-47.9	-4.1				
<b>1</b>	<b>Համախառն ներքին սպառում</b>	<b>3,979.1</b>	<b>16.2</b>	<b>703.5</b>	<b>2,257.5</b>	<b>384.3</b>	<b>737.4</b>		<b>-119.8</b>
<b>2</b>	<b>Փոխակերպում-մուտքեր</b>	<b>-1,340.6</b>			<b>-603.2</b>		<b>-737.4</b>		
2.1	Ատոմային էլեկտրակայաններ	-737.4					-737.4		
2.2	Զերմաէլեկտրակայաններ (կոնդենսացիոն)	-601.8			-601.8				
2.3	Համակցված արտադրության էլեկտրակայաններ (կոգեներացիա)	-1.5			-1.5				
2.4	Այլ								
<b>3</b>	<b>Փոխակերպում-արդյունք</b>	<b>546.0</b>						<b>0.3</b>	<b>545.7</b>
3.1	Ատոմային էլեկտրակայաններ	243.3							243.3
3.2	Զերմաէլեկտրակայաններ (կոնդենսացիոն)	302.1						0.3	301.8
3.3	Համակցված արտադրության էլեկտրակայաններ (կոգեներացիա)	0.6							0.6
3.4	Այլ								
<b>4</b>	<b>Փոխանակում և փոխանցում, վերադարձ</b>					<b>-278.7</b>		<b>17.3</b>	<b>261.4</b>

h/h	Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռ, 2024թ.	Ընդամենը	Ածուխ	Նավթամթերք	Բնական գազ	Վերականգնվող էներգակիրներ	Միջուկային էներգիա	Ջերմային էներգիա	Էլեկտրական էներգիա
1	2	3	4	5	6	7	8	9	10
4.1	Հիդրոէլեկտրակայաններ (խոշոր)					-90.7			90.7
4.2	Փոքր հիդրոէլեկտրակայաններ					-86.3			86.3
4.3	Հողմային էլեկտրակայաններ					-0.1			0.1
4.4	Արևային էլեկտրակայաններ					-101.5		17.3	84.2
<b>5</b>	<b>Սպառում էներգետիկայի ոլորտում (սեփական կարիքների համար)</b>	<b>-37.7</b>				<b>-6.4</b>			<b>-31.2</b>
5.1	Ատոմային կայաններ	-17.3							-17.3
5.2	Ջերմակայաններ	-10.6							-10.6
5.3	Հիդրոկայաններ	-2.9							-2.9
5.4	Հողմային կայաններ	0.0							0.0
5.5	Գազատրանսպորտային համակարգ	-6.4				-6.4			
5.6	Այլ կայաններ	-0.4							-0.4
<b>6</b>	<b>Կորուստներ բաշխման և հաղորդման ընթացքում</b>	<b>-176.7</b>				<b>-123.2</b>			<b>-53.5</b>
<b>7</b>	<b>Վերջնական սպառման համար հասանելի ծավալ</b>	<b>2,970.1</b>	<b>16.2</b>	<b>703.5</b>	<b>1,524.6</b>	<b>105.6</b>		<b>17.6</b>	<b>602.6</b>
<b>7.1</b>	<b>Ոչ էներգետիկ նպատակներով վերջնական սպառում</b>	<b>69.3</b>	<b>0.4</b>	<b>67.1</b>		<b>1.8</b>			
7.1.1	Քիմիական արդյունաբերություն	0.2		0.2					
7.1.2	Այլ ոլորտներ	69.1	0.4	66.9		1.8			
<b>7.2</b>	<b>Էներգետիկ նպատակներով վերջնական սպառում</b>	<b>2,900.8</b>	<b>15.7</b>	<b>636.4</b>	<b>1,524.6</b>	<b>103.8</b>		<b>17.6</b>	<b>602.6</b>

h/h	Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռ, 2024թ.	Ընդամենը	Ածուխ	Նավթամթերք	Բնական գազ	Վերականգնվող էներգակիրներ	Միջուկային էներգիա	Ջերմային էներգիա	Էլեկտրական էներգիա
1	2	3	4	5	6	7	8	9	10
<b>7.2.1</b>	<b>Արդյունաբերության ոլորտ</b>	<b>399.9</b>	<b>0.0</b>	<b>13.2</b>	<b>226.2</b>	<b>0.0</b>		<b>0.3</b>	<b>160.1</b>
7.2.1.1	Սև մետալուրգիա	22.4		0.0	12.4				9.9
7.2.1.2	Քիմիական արդյունաբերություն (ներառյալ նավթաքիմիան)	3.0		0.2	1.4				1.4
7.2.1.3	Գունավոր մետալուրգիա	12.2		1.1	1.1	0.0			10.0
7.2.1.4	Ոչ մետաղական հանքային արտադրանք	126.2	0.0	0.2	108.5				17.5
7.2.1.5	Տրանսպորտային սարքավորումներ	0.0							0.0
7.2.1.6	Մեքենաշինություն	3.0			0.8	0.0			2.2
7.2.1.7	Հանքագործական արդյունաբերություն	96.6		8.7	8.1				79.9
7.2.1.8	Սննդամթերք, խմիչքներ, ծխախոտ	97.0		0.0	70.5	0.0			26.4
7.2.1.9	Թուղթ, թղթ արտադրատեսակներ և պոլիգրաֆիա	8.2			5.9	0.0			2.3
7.2.1.10	Փայտ և փայտե արտադրատեսակներ	0.1							0.1
7.2.1.11	Մանածագործական, հագուստի և կաշվե արտադրատեսակներ	3.4			1.5				1.9
7.2.1.12	Շինարարություն	21.5		3.1	14.5				3.9
7.2.1.13	Վերը չթվարկված (արդյունաբերություն)	6.5		0.0	1.3	0.0		0.3	4.8
<b>7.2.2</b>	<b>Տրանսպորտի ոլորտ</b>	<b>891.3</b>		<b>586.5</b>	<b>297.7</b>				<b>7.0</b>
7.2.2.1	Երկաթգիծ, մետրոպոլիտեն, այլ էլեկտրական տրանսպորտ	4.9							4.9
7.2.2.2	Ճանապարհային տրանսպորտ	884.3		586.5	297.7				

h/h	Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռ, 2024թ.	Ընդամենը	Ածուխ	Նավթամթերք	Բնական գազ	Վերականգնվող էներգակիրներ	Միջուկային էներգիա	Ջերմային էներգիա	Էլեկտրական էներգիա
1	2	3	4	5	6	7	8	9	10
7.2.2.3	Ավիացիա	1.4							1.4
7.2.2.4	Այլ (տրանսպորտ)	0.7							0.7
7.2.3	Տնային տնտեսություններ	1,075.1	13.6	6.1	741.2	101.9		8.6	203.6
7.2.4	Գյուղատնտեսություն	133.1		15.6	106.2				11.2
7.2.5	Ծառայություններ	401.5	2.1	15.0	153.2	1.9		8.6	220.7
7.3	Վիճակագրական շեղում	0.0			0.0				0.0

Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռը 2024 թվականի համար, ՄԷԳ ձևաչափով, ագրեգացված, (հազար տ ն. հ.)

h/h	Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռ, ՄԷԳ, 2024թ.	Ածուխ	Նավթամթերք	Բնական գազ	Միջուկային	Հիդրո	Երկրաջերմային	Արևային, Հողմային, Այլ	Կենսազանգված և թափոններ	Էլեկտրական էներգիա	Ջերմային	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1.1	Արտադրություն	0.0			737.4	177.1		101.6	88.0			1,104.0
1.2	Ներմուծում	16.2	857.8	2,261.7					17.7	12.5		3,165.8
1.3	Արտահանում	0.1	-0.3						-0.1	-132.2		-132.7
1.4	Միջազգային ավիացիոն բունկեր		-106.1									-106.1
1.5	Պահեստում փոփոխություններ	0.0	-47.9	-4.1								-52.0
<b>1</b>	<b>Ընդամենը առաջնային էներգիայի մատակարարում</b>	<b>16.2</b>	<b>703.5</b>	<b>2,257.5</b>	<b>737.4</b>	<b>177.1</b>		<b>101.6</b>	<b>105.6</b>	<b>-119.8</b>		<b>3,979.1</b>
<b>2</b>	<b>Փոխանցումներ</b>											
<b>3</b>	<b>Վիճակագրական շեղում</b>			<b>0.0</b>						<b>0.0</b>		<b>0.0</b>
<b>4</b>	<b>Փոխակերպման գործընթացներ</b>			<b>-603.2</b>	<b>-737.4</b>	<b>-177.1</b>		<b>-101.6</b>		<b>807.1</b>	<b>17.6</b>	<b>-794.6</b>
4.1	Էլեկտրական կայաններ			-601.8	-737.4	-177.1		-42.4		764.6		-793.7
4.2	Ինքնավար էլեկտրական կայաններ							-41.9		41.9		
4.3	Համակցված արտադրության էլեկտրական կայաններ (կոգեներացիա)			-1.5						0.6		-0.9
4.4	Ինքնավար համակցված արտադրության էլեկտրական կայաններ (կոգեներացիա)										0.3	
4.5	Ջերմային կայաններ										17.3	
4.6	Ինքնավար ջերմային կայաններ							-17.3				
4.7	Այլ կայաններ											
<b>5</b>	<b>Սպառում էներգետիկայի ոլորտում (սեփական կարիքների համար)</b>			<b>-6.4</b>						<b>-31.2</b>		<b>-37.7</b>
<b>6</b>	<b>Բաշխման կորուստներ</b>			<b>-123.2</b>						<b>-53.5</b>		<b>-176.7</b>
<b>7</b>	<b>Ընդամենը վերջնական սպառում</b>	<b>16.2</b>	<b>703.5</b>	<b>1,524.6</b>					<b>105.6</b>	<b>602.6</b>	<b>17.6</b>	<b>2,970.1</b>
<b>7.1</b>	<b>Էներգետիկ նպատակներով վերջնական սպառում</b>	<b>15.7</b>	<b>636.4</b>	<b>1,524.6</b>					<b>103.8</b>	<b>602.6</b>	<b>17.6</b>	<b>2,900.8</b>
<b>7.1.1</b>	<b>Արդյունաբերության ոլորտ</b>	<b>0.0</b>	<b>13.2</b>	<b>226.2</b>					<b>0.0</b>	<b>160.1</b>	<b>0.3</b>	<b>399.9</b>
<b>7.1.1.1</b>	<b>Սև մետալուրգիա</b>		<b>0.0</b>	<b>12.4</b>						<b>9.9</b>		<b>22.4</b>

h/h	Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռ, ՄԷԳ, 2024թ.	Ածուխ	Նավթամթերք	Բնական գազ	Միջուկային	Հիդրո	Երկրաջերմային	Արևային, Հողմային, Այլ	Կենսազանգված և թափոններ	Էլեկտրական էներգիա	Զերմային	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
7.1.1.2	Քիմիական արդյունաբերություն (ներառյալ նավթաքիմիան)		0.2	1.4						1.4		3.0
7.1.1.3	Գունավոր մետալուրգիա		1.1	1.1					0.0	10.0		12.2
7.1.1.4	Ոչ մետաղական հանքային արտադրանք	0.0	0.2	108.5						17.5		126.2
7.1.1.5	Տրանսպորտային սարքավորումներ									0.0		0.0
7.1.1.6	Մեքենաշինություն			0.8					0.0	2.2		3.0
7.1.1.7	Հանքագործական արդյունաբերություն		8.7	8.1						79.9		96.6
7.1.1.8	Սննդամթերք, խմիչքներ, ծխախոտ		0.0	70.5					0.0	26.4		97.0
7.1.1.9	Թուղթ, թղթե արտադրատեսակներ և պոլիգրաֆիա			5.9					0.0	2.3		8.2
7.1.1.10	Փայտ և փայտե արտադրատեսակներ									0.1		0.1
7.1.1.11	Մանածագործական, հագուստի և կաշվե արտադրատեսակներ			1.5						1.9		3.4
7.1.1.12	Շինարարություն		3.1	14.5						3.9		21.5
7.1.1.13	Վերը չթվարկված (արդյունաբերություն)		0.0	1.3					0.0	4.8	0.3	6.5
<b>7.1.2</b>	<b>Տրանսպորտի ոլորտ</b>		<b>586.5</b>	<b>297.7</b>						<b>7.0</b>		<b>891.3</b>
7.1.2.1	Երկաթգիծ, մետրոպոլիտեն, այլ էլեկտրական տրանսպորտ									4.9		4.9
7.1.2.2	Ճանապարհային տրանսպորտ		586.5	297.7								884.3
7.1.2.3	Ավիացիա									1.4		1.4
7.1.2.4	Այլ (տրանսպորտ)									0.7		0.7
<b>7.1.3</b>	<b>Այլ ոլորտներ</b>	<b>15.7</b>	<b>36.7</b>	<b>1000.7</b>					<b>103.8</b>	<b>435.5</b>	<b>17.3</b>	<b>1,609.6</b>
7.1.3.1	Տնային տնտեսություններ	13.6	6.1	741.2					101.9	203.6	8.6	1,075.1
7.1.3.2	Գյուղատնտեսություն		15.6	106.2						11.2		133.1
7.1.3.3	Ծառայություններ	2.1	15.0	153.2					1.9	220.7	8.6	401.5
<b>7.2</b>	<b>Ոչ էներգետիկ նպատակներով վերջնական սպառում</b>	<b>0.4</b>	<b>67.1</b>						<b>1.8</b>			<b>69.3</b>
7.2.1	Քիմիական արդյունաբերություն		0.2									0.2
7.2.2	Այլ ոլորտներ	0.4	66.9						1.8			69.1

